Օրվա դասի պլան /Բաց դաս/

16 – 05 - 2023թ.

Դասարան – 2- 3-րդ դասարաններ

Առարկա - Մայրենի

Դասի թեմա – Ամփոփիչ դաս՝ <<Իմ հայրենիք>> ՝տարրական դասարանների մասնախմբի մեթոդմիավորման կողմից

Օգտագործվող նյութեր – Դասագիրք , հարցաթերթիկներ, նկարներ, հեքիաթների , հանելուկների ժողովածուներ

Դասի նպատակը – Անրակայել համագործակցային կարողությունները, զարգացնել կամային որակները,հարստացնել բառապաշարը , զարգացնել բանավոր խոսքը, կարդալու , արտահայտվելու կարողությունները

Վերջնարդյունքները –Մտքերն արտահայտի պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային, լսի հրահանգներ, իրեն ուղղված խոսքը և արձագանքի , ճանաչի բառը որպես պատկերավորման միջոց , կարևորի մայրենի լեզվի դերը, ամրապնդի հայրենիքի նկատմամբ սերը, համագործակցի ընկերների հետ՝ պահպանելով բարեվարքության և խմբային աշխատանքի սահմանված կանոնները, պահպանի ուղղախոսական կանոնները:

Դասի ընթացքը.

Ուսուցիչ	Սովորողներ
. Սովորողներին ներկայացնում է օրվա բաց դասի նպատակը, աշխատելու կարգը, խմբերի բաժանվելու ձևը , ընթացքում միմյանց հետ համագործակցելու կարգը , բարեվարքության սահմանված կանոնների պահպանման կարևորությունը:	. Սովորողները զամբյուղի միջից ընտրում են իրենց սեղանների վրա դրված խմբերի անունների թերթիկները՝ <<Աստղիկներ>>, << Արևներ>> զբաղեցնում իրենց սեղանները: Ընտրում են խմբերի խոսնակներ , որոնք հարցի քննարկման պատրաստ լինելուց հետո պետք է բարձրացնեն իրենց սեղանի վրա դրված դրոշները:
. Հարցերի՝մտագրոհի միջոցով սովորողներց պահանջում է հիշել գրական ստեղծագործությունների ժանրերի տեսակներ , առաջարկում է վերհիշել տարվա ընթացքում անցած ստեղծագործություններից , գրական ունկնդրման ընթացքում կարդացած գրական տարբեր ժանրերի ստեղծագործություններ:	. Անվանում են գրական ժանրերի տեսակներից՝ հանելուկ, ավանդություն, հեքիաթ, առակ, պատմվածք, բանաստեղծություն և ներկայացնում յուրաքայչյուր ժանրի կառուցվածքը բովանդակային իմաստը: Բերում են օրինակներ , ներկայացնում՝ անգիր, պատմելով, վերլուծելով:
. Ներկայացնում է գրատախտակի վրա փակցված հարցաթերթիկները, որոնց վրա գրված են հատվածներ << Հայրենիք>> թեմայի ստեղծագործություններից , խմբերին առաջարկում է ընտրել թերթիկներ վերցնողներին: Ապա գրված հատվածը գուծակել խմբով ,համագործակցել, ընտրել ներկայացնողին, պատասխանել:	. Հարցաթերթիկները վերցնելուց հետո, խմբով քննարկեցին ,թե որ թեմաներից են հատվածները, ապա իրենց խոսնակները բարձրացրեցին դրոշները և պատասխանեցին՝<<Այծեմնիկը>>, <<Սասունցի Դավիթ>>, <<Նամակ զինվորին>>, <<Երգ հայրենիքի մասին>>, <<Լեռները հպարտ>>, <<Քաջ Վարդանը>> և այլն: Կատարեցի խմբային վերլուծություն , արտասանեցին հատվածներ, պատմեցին՝ պահպանելով ուղղախոսական կանոնները:
. Քառաբաժան մեթոդով անդրադարձ կատարեց հայրենասիրական թեմայի ստեղծագործություններին , առաջարկեց դասագրքերից դուրս հանել պատկերավոր բառազույգեր, հեքիաթների և հանելուկների ժողովածուներից առաջարկեց խմբերի անդամներին կարդալ մի քանի պատկերավոր բառակապակցություն, արժևորել հայրենիքը, մայրենի լեզուն: Առաջարկեց ֆիզկուլտ դադար՝<<Լավաշ ենք թխում>>	. Ներկայացրեցին՝ ինչ՞ լսեցին, ինչ՞ զգացին ,ինչ՞ տեսան և ինչ՞ մտքեր ծնվեցին քառաբաժան հարցերի պատասխաններտ, կատարեցին խմբային քննարկում , միմյանց տվեցին հարցեր, հուշող քննարկումներ կատարեցին՝ միմյանց օգնելու, համագործակցելու նպատակով: Ասեցին պատկերավոր բառազույգեր, արտասանեցին համապատասխան տողերը, կարդացին հանելուկներ, հատվածներ հեքիաթներից:

21:39

21:38
66
Անցյալ
ժամանակ
էի էինք
էիր էիք
էր էին

Ես հայ եմ